

ՇԵՎՉԵՆԿՈՆ ԵՎ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուկրաինական գրականության կլասիկ Տարաս Շևչենկոյի ստեղծագործությունները համակված են ջերմ սիրով ուկրաինական աշխատավոր ժողովրդի և բոլոր ձնշված ժողովուրդների նկատմամբ: Որպես Ուկրաինայի հարուղատ վալակ, նա երգել է ուկրաինական ժողովրդի վիշտը, տառապել նրա տանջանքներով, ծառացել ձնշողների դեմ, խարազանել է բռնությունն ու դաժանությունը: Մոլեգին Տարասը համարձակ և քաջամար կոչ էր անում ցարական բռնապետական լծի տակ տառապող ուկրաինական և մյուս ժողովուրդներին պայքարի դուրս գալ հանուն իրենց ազատության ու անկախության: Նրա կոչերը ուղղված էին նաև Եվրոպայի և Արևելքի ձնշված ժողովուրդներին՝ հունգարացիներին, չեխներին, չինացիներին: Տարաս Շևչենկոն ժողովրդի ամենամեծ խոհերի՝ ազատության, եղբայրության, սիրո ու երջանկության արտահայտիչն է:

Շևչենկոյի երկերը թարգմանվել են աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով: Իրենց մայրենի լեզվով Շևչենկոյին կարդում են ֆրանսիացիները, գերմանացիները, անգլիացիները, ճապոնացիները, սլավոնական ժողովուրդները, Սովետական Միության ժողովուրդները: Ուկրաինական բանաստեղծի ժառանգությունը մարդկության սեփականությունն է դարձել: Շևչենկոյի պոեզիան, ինքնատիպ և ուրույն առանձնահատկություններով, անկրկնելի ներդրում է անաշխարհային գրականության մեջ:

* * *

Ինչպես բոլոր ձնշված ժողովուրդները, այնպես և հայ ժողովուրդը սիրելի մեծ բանաստեղծին, նրա տենչանքներն ու երազանքները, ազատատենչ խոհերն ու գաղափարները, ազնիվ ցասումը տիրողների և բռնակալների նկատմամբ հարապատ են եղել նրան: Շևչենկոյի անվեհեր բանաստեղծությունները հայրենասիրության ու ազատասիրության պայքարներով տոգորել են հայ գրական-հասարակական միտքը: Սովետահայ ականավոր գրող Ստ. Զորյանը վկայում է, որ դեռևս պատանեկության տարիներին ծանոթանալով Շևչենկոյի ստեղծագործություններին, առաջին իսկ պահից ստացել է հարապատի տպավորություն: «Նրա երգերում,—ասում է նա,—ես միշտ պզուկ էի պեղծելիկ ուկրաինացի և նրա անապատ ժողովուրդը, որի կյանքը հար և նման էր հայ ժողովրդի ծանր վիճակին: Կարգալով Շևչենկոյի հայրենասիրական երգերը՝ ինձ այնպես էր թվում, թե նա նկատի է ունեցել նաև հայ ժողովրդի ձնշված վիճակը: Ուստի և Կուրդարի ընթերցանությունը ուրախություն ու սիրովանք էր բերում ինձ, թե ընկերներին: Ավելին. մեր հոգին լցվում էր հայրենասիրու-

թյամբ ու ազատասիրությամբ¹։ Շեչենկոյի ազատաբաղձ գաղափարները հայ մտավորականությունը անցյալում ամեն կերպ աշխատել է տարածել ժողովրդի մեջ։

Ուկրաինական մեծ բանաստեղծը հայ իրականություն մտավ մահից անմիջապես հետո, 1861 թ., միանգամայն ուրույն հանգամանքներում։

Հայտնի է, որ պատմական իրադարձությունների հետևանքով հայ ժողովրդի առանձին հատվածները թողնելով հայրենի հողը ապաստան էին դրսևում օտար երկրներում, որտեղ նպաստավոր պայմաններ կային կյանքի ապավուման համար։ Ճակատագրի բերումով աշխարհով մեկ ցրված հայկական այդ գաղթօջախներում մեծ աշխատանք էր տարվում ազգապահպանության, բուն հայրենիքի հետ նրանց կապը չկտրելու ուղղությամբ։ Այս նպատակով գաղթօջախներում հիմնադրվում էին ազգային դպրոցներ, կուլտուր-լուսավորական հիմնարկներ, տպագրվում էին մայրենի լեզվով գրքեր, լույս էին ընծայվում պարբերական հրատարակություններ և այլն։ Չնայած այդ միջոցառումներին, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում գաղթօջախների հայկական հատվածները աստիճանաբար մոռանում կամ վատ էին տիրապետում մայրենի լեզվին։ Գաղթօջախի կյանքի դարգացման այդ փուլում մայրենի լեզվից բացի կուլտուրական աշխատանք տարվում էր երկրի ժողովուրդների լեզվով։ Այս երևույթը մինչև հիմա էլ պահպանվել է հայկական որոշ գաղթօջախներում։

Տարաս Շեչենկոն առաջին անգամ հայ իրականություն է մտել գաղթօջախի պայմաններում, ըստ որում ոչ մայրենի լեզվով։

Անցյալ դարի հայ գրական և հասարակական ղեմերից մեկի՝ Գաբրիել Ալվալովսկու «Մասյաց աղավնի» պարբերականը, որ 1855—1859 թթ. հայերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակվում էր Ֆրանսիայի հայկական գաղթօջախում՝ Փարիզում, 1859 թ. փոխադրվում է Թեոդոսիայի հայկական պաղույթը, որ այն լույս էր տեսնելու նաև ռուսերեն լեզվով։

«Մասյաց աղավնի» պարբերականի ռուսական բաժինը՝ առանձին հրատարակությամբ Թեոդոսիայում լույս է տեսնում 1860 թ. հունվարից «Радуга» անունով²։ Պարբերականի հրատարակության առթիվ հայտարարության մեջ ասված է, որ նրա զխավոր նպատակն է «օժանդակել հայ ժողովուրդի լուսավորությանը, տարածել նրա մեջ օգտակար տեղեկություններ, առաջացնել նրանում սեր և պահանջ ընթերցանության նկատմամբ...»։ Ելնելով պարբերականի առաջ քաշած խնդիրներից, մասնավորապես նրա գրական բաժնի մասին, նույն հայտարարության մեջ ասված է, որ նրանում կգետնվեն հայ գրողներից բանաստեղծություններ, բարոյախոսական պատմվածքներ և այլն, ինչպես նաև ռուս և օտարերկրյա հեղինակների գրվածքների թարգմանություններ։

Ռուսերեն լեզվով հրատարակվող հայկական այս պարբերականում էր, որ առաջին անգամ խոսք է եղել Տարաս Շեչենկոյի մասին և զետեղվել են նրա բանաստեղծությունների թարգմանությունները։

Ուկրաինական նշանավոր ժողովրդական բանաստեղծի մահվան առթիվ «Радуга»-ի 1861 թ. ապրիլ ամսվա համարում տպագրվել է նրա համառոտ

1 Ս. Ս. Զ. Ս. Ս. Ս., Հարազատ Շեչենկոն, «Գրական թերթ», N 11, 13 մարտի 1964։

2 Այս պարբերականի վրա մեր ուշադրությունը հրավիրեց բանասեր Ս. Կ. Գաբոնյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

կենսագրությունը, որի հեղինակն է ուկրաինացի Պ. Դյաչենկոն³։ Ճիշտ է կենսագրության մեջ չի խոսվում բանաստեղծի ազատասիրական, հեղափոխական ոգու, նրա արսորավայրերում տառապած տարիների մասին, այսուամենայնիվ ընթերցողը որոշ պատկերացում է ստանում Շեչենկոյի ունեցած ծանր ու դժան կյանքի վերաբերյալ։ Կենսագրությունից հետո ղևակոված է «Думы» բանաստեղծության ռուսերեն թարգմանությունը։ Պարբերականը նպատակ ունենալով իր ընթերցողներին ավելի լայնորեն ծանոթացնելու Շեչենկոյի բանաստեղծության հետ, հետևյալ՝ մայիսի համարում տպագրել է նույն Պ. Դյաչենկոյի թարգմանությամբ Շեչենկոյի վեց բանաստեղծությունները («Доля», «Не до дому в ночи йдучи...», «Чого ти ходишь на могилу?...», «Немає гірше, як в неволі...» և այլն)։ Ինչ խոսք, հասկանալի պատճառներով բանաստեղծությունների թարգմանությունները տպագրվել են կրճատումներով։

Այսուհանգերձ, պետք է ասել, որ Տարաս Շեչենկոյի ազատասիրական ու հայրենասիրական բանաստեղծությունները ղեռնա չէին հասել հայ ընթերցող լայն զանգվածներին։

Ուկրաինական մեծ բանաստեղծը հայ գրականության մեջ մտավ մահից 17 տարի հետո միայն, անցյալ դարի 70-ական թվականների վերջերին, ըստ որում Ռուսաստանի սահմաններից դուրս՝ նորից հայ գաղութում։ Յարական Ռուսաստանի դոժան պայմաններում, երբ ազատության մարտիկը տառապում էր արսորավայրերում, իսկ հետագայում արգելվում էր անգամ նրա անունը տալ, բնականաբար, հայ ժողովուրդը չէր կարող ավելի վաղ կամ հայրենի հողում իր հոգեհարազատ վերաբերմունքը ցուցաբերել բանաստեղծի նկատմամբ։

1879 թ. Վենետիկում լույս տեսնող «Բաղմավեպ» հանդեսում տպագրվեց Քերովբե Քուչներյանի «Թառաս Շեչենքո — ազգային բանաստեղծ Փոքր-Ռուսիո» վերնագրով ծավալուն և արժեքավոր հոդվածը⁴։

Քուչներյանը ոչ միայն առաջինն է մեր գրականության մեջ, որ զբաղվել է Շեչենկոյի մասին, այլև Շեչենկոյի հայերեն առաջին թարգմանիչն է։ Իր հոդվածում նա ղեռնաղել էր Շեչենկոյի մի քանի բանաստեղծությունները։ Բացի ռուսերենից, ամենայն հավանականությամբ նա տիրապետել է նաև ուկրաիներենին և իր թարգմանությունները կատարել է բնագրից։ Հոդվածում տալով ուկրաինական ժողովրդի համառոտ պատմությունը, Քուչներյանը բավական ընդարձակ շարադրել է Տարաս Շեչենկոյի կենսագրությունը։ Հոդվածը վերջա-

³ Ի դեպ Շեչենկոյի այս կենսագրությունը, ինչպես և նրա բանաստեղծությունների թարգմանությունները, որոնք տպագրվել են «Радуга»-ում, գուրա են մնացել Շեչենկոյի վերաբերյալ եղած բոլոր մասենադիտական ցանկերից։

⁴ «Բաղմավեպ», 1879, հատ. 11, էջ 38—55։ Հեղինակը Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներից էր, ծագումով ուսահայ, ծնվել է Ղրիմի Ղարաուսուրազար բաղաբում։ Նա երկար ժամանակ աշխատել էր Ռեդոսիայում, ունեցել իր սեփական գլորոցը։ Քուչներյանը «Բաղմավեպի» աշխատակից լինելուց բացի զբաղվել է և գրական աշխատանքով. զբաղված էր հոդվածներ, առակներ, ոտանավորներ, կատարել է ուսումնասիրություններ, թարգմանություններ կամ փոխադրություններ ոտարագրի բանաստեղծներից։ Այդպես, նա թարգմանել է Պուշկինից, Լերմոնտովից, Կոպերնիկից, Միցկիչից, Կոկոտից, Լաֆոնտենից, Նյուրիսից և ուրիշ բանաստեղծներից։ Նրա ինքնուրույն առակները, ոտանավորները, ինչպես և թարգմանություններն ու փոխադրությունները մասնակից հետո մի գրքով հրատարակվել է «Առակը, ծագկարագր և ինքնագիրը» վերնագրով Վենետիկում, 1904 թ.։

նում է Շեչենկոյի գլխավոր ստեղծագործությունների վերլուծության ընդհանուր ակնարկով:

Քուչներյանը բարձր է գնահատում Շեչենկոյին որպես ազգային բանաստեղծի: Ձկա մի ուկրաինացի, ասում է նա, որ մեծ սիրով ու հարգանքով շարտասանի Շեչենկոյի անունը, չկա և ոչ մի գյուղացի, որ նրա մի քանի երգերը անգիր չիմանա: Նշելով, որ Շեչենկոն իր ստեղծագործությունների համար հավաքել է ուկրաինական ժողովրդի երգերը, լեգենդները, անցյալի դյուցազունների քաջագործությունների ժողովրդական պատումները, հոգվածագիրն ավելացնում է, որ նրա մեծ հարգը միայն հավաքելու վրա չէ, այլ որ գլխավորն է, զրանք կոկելու և նմանատիպերը գրելու մեջ, բանաստեղծը վառվռուն հանձարով մեծ շնորհք ու լույս է ավելացրել նրանց վրա, որով և առհասարակ նրա երգերը ընդունելի և հասկանալի են ժողովրդի բոլոր խավերին: Այս իմաստով Քուչներյանը Շեչենկոյին ուկրաինական Հոմերոս է անվանում. «...Կհամարժակվիմ զուրցելու,— ասում է նա,— որ ինչպես Հոմերոս, Իլիականի և Ոդիսականի հեղինակը, ի մի հավաքելով հունաց չին երգերը, ամբողջ երգության մը սարքեց դյուցազանց քաջագործությանց... նույնը բրած է և Շեչենկոյան Փոքր-Ռուսիո»: Բնութագրելով Շեչենկոյի ստեղծագործությունները Քուչներյանը ասում է, որ նա երգել է ժողովրդի իղծերը, նրա տրամադրություններն ու ակնկալությունները, նրա գրվածքները գովել և գործել են առաջադրում «առ տկարս և ընկճյալս» և ընդհակառակը՝ ատելություն և զայրույթ՝ «առ հարստահարիչս»: Նա լուրջ ժողովրդական բանաստեղծ չէ, այլ բանաստեղծ է բառիս իսկական իմաստով, ավելի ճիշտ՝ քերթողահայր մի ամբողջ ազգի: Նրա անձը մագնիսի նման դեպի իրեն է քաշում ուկրաինական ժողովրդի սիրտը: Ի վերջ, Քուչներյանը այս կապակցությամբ մի հետաքրքիր համեմատություն է անում: Նշելով, որ օտարության մեջ գտնվող հայը, երբ ընկնում է Արարատյան դաշտ, պարտք է համարում փնտրել և գտնել հայ դպրության նախահոր Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը՝ իր երախտագիտությունը ցուցաբերելու այն մեծ հային, որը լույս և դպրություն ավելց մեր ազգին, դառնությունամբ ավելացնում է, որ այն, ինչ որ մեզ մոտ անում են անհատներ, Ուկրաինայում առհասարակ մինչև վերջին աղքատն է անում, պատվելով իր բառատեղծ Շեչենկոյին: Անպակաս է նրա գերեզմանը այցելող բազմությունը, — ասում է նա. երբ գարունը բացվում է, ուկրաինական ժողովուրդը ուխտավորի նման բոլոր կողմերից հավաքվում է այն բլրակի ստորոտը, որտեղ թաղված է Շեչենկոն, և «անհրաժանգ շինականք, բերնուց երգեր կսովրին, և հախտուն բազմությամբ կմեծարեն երգչին հիշատակը՝ սրբոց և սրբատեղյաց արժանավայել ուխտագնացությամբ»: Նման երևույթի, մենք չենք հանդիպում վերջին դարերում, ասված է հույվածում, երբ մի բանաստեղծ կարողանա այդքան խորը կերպով ազդել մի ազգի միլիոնավոր սրտերի վրա:

Մենք արդեն գիտենք, որ Քուչներյանը իր հոգվածում գետնդել է նաև Շեչենկոյի բանաստեղծություններից կատարած իր թարգմանությունները, որոնք, ինչպես վերը նշվեց, հանդիսանում են մեծ բանաստեղծի երկերի հայերեն առաջին թարգմանությունները: Դրանցից միայն «Ілляно мені чорні дрови» բանաստեղծության թարգմանությունն է ամբողջական, որին տրված է «Թարգմանություն» վերնագիրը: Մյուս թարգմանությունները հատվածներ են հայտնի «Заповіт», «Гамалія», «Марина», ինչպես և «Мар'яна-черниця» չափածո երկերից: Վերջինից ոչ միայն սկիզբն է բաց թողնված, այլև թարգմարեր 7—3

մանություն մեջ կան բնագրի տարբեր մասերի հապավումներ և, բացի այդ, հատվածների տեղափոխումներ: Ուշագրավ է, որ թարգմանչի այս կարգի աշխատանքը առանձնապես չի անգրագարձել Լերկի վրա: Չնայած բնագրից կատարված այդ շեղումներին, այնուամենայնիվ թարգմանությունը ամբողջական Լերկի տպավորություն է թողնում:

Քուչներյանի թարգմանական լեզուն հիմնականում արևմտահայ է: «Մտածություն» բանաստեղծությունն է միայն, որ նա թարգմանել է գրաբար: Պետք է ասել, որ Քուչներյանը առհասարակ իր բոլոր թարգմանություններում Լերեման ազատություն է տվել իրեն, շեղվել է բնագրից: Այսուհանդերձ, թարգմանությունները կատարված են որակով և հասկանալի ընթերցող լայն շրջաններին:

Մանկավարժ, գրականագետ և բանաստեղծ Քերովբե Քուչներյանի գրած այս հոդվածը լի է ջերմությամբ, սիրով և համակրանքով ուկրաինական ժողովրդի և նրա բանաստեղծ Տարաս Շևչենկոյի նկատմամբ: Մենք դիտավորյալ հանդամանորեն խոսում ենք Քուչներյանի հոգվածի մասին, նկատի ունենալով, որ այն մեծ նշանակություն ունի հայ և ուկրաինական գրական կապերի, մեր կուլտուրայի ու գրականության պատմության համար:

Տարաս Շևչենկոյի մասին Քուչներյանի հոգվածից հետո, որքան մեկ հայանի է, Լերկար ժամանակ մեր գրականության մեջ և պարբերական մամուլում չի հիշատակվում նրա անունը: Այս Երևույթը պետք է բացատրել ցարական Ռուսաստանում Շևչենկոյի նկատմամբ եղած վերաբերմունքով: Նույն աչք Երևույթը նկատելի է և բուս գրականության մեջ: Բացի Շևչենկոյի Լերկերի մեկ-երկու փոքրածավալ հրատարակությունից և նույնչափ կենսագրական լղարիկ գրվածքներից, այդ շրջանում ոչինչ չի տպագրվել ռուսերեն լեզվով:

Այսուամենայնիվ հաստատապես կարելի է ասել, որ անցյալի հայ առաջավոր հասարակայնությունը բարձր է գնահատել Տարաս Շևչենկոյին: Հայ ազնաւոր հրապարակախոսներն ու գրողները, ցարական դաժան պայմաններում առիթ բաց չէին թողնում դպրոցներում և առանձին շրջաններում խուսել Շևչենկոյի մասին, ունկնդիրներին ծանոթացնել նրա կյանքին և ստեղծագործություններին: Ռուսական առաջին հեղափոխությունից հետո մեր մամուլում, շնայած հատ ու կենտ, բաց սկսում են Լերեման գալ Շևչենկոյից կատարված թարգմանություններ և հոգվածներ նրա մասին, որոնց մեջ արժեքավորում են նրա ստեղծագործությունների գերն ու նշանակությունը ուկրաինական համաշխարհային գրականության մեջ:

1911 թ. լրացավ բանաստեղծի մահվան 50-ամյակը: Ցարական կառավարությունը դիմեց ամեն տեսակի միջոցների, որ այդ հոբելյանի նշումը խափանվի: Չնայած այդ խոչընդոտներին, այնուամենայնիվ, Կիևում, Պետերբուրգում և այլուր հասարակայնությունը ցուցաբերեց իր վերաբերմունքը հոբելյանի նկատմամբ: Դրանից անմասն չմնաց և հայ ժողովուրդը: Թիֆլիսի «Սուրհանդակ» թերթում տպագրվեց Շևչենկոյի կենսագրականը և «В неволи, в самоти немає» բանաստեղծության փոխադրությունը: «Հորիզոն» և «Մշակ» թերթերում տպագրվեց Շևչենկոյի համառոտ կենսագրությունը, իսկ «Տարաղս պարբերականը, բացի հոբելյանին նվիրված հոգվածի տպագրումից, իր բանաստեղծություններն որպես հավելված ուղարկեց Շևչենկոյի մեծագիր նկարը՝ ուկրաինական փափախով ու մուշտակով:

Առանձնապես պետք է նշել հայ մարքսիստների վերաբերմունքը Շեչենկոյի նկատմամբ և հորելյանի կապակցությամբ նրանց գրած հոդվածները։ Իոլշնիկ հրապարակախոս Սուրեն Սոլանդարյանը իր «Ակնարկներ» վերնագիրը կրող հոդվածում պայքարում է նշում Թիֆլիսի Զուբալովի անվան ժողովրդական տան վարչության վերաբերմունքը Տարաս Շեչենկոյի հիշատակը նշելու կապակցությամբ։ Այս օրը բեմի վրա կատարվել են դոկտորական կոնցերտներ։ «Հրաշալի է, այնպես չէ՞», — ասում է նա, — ժողովրդական բեմը դարձնել կաֆե-շանտան։ Եվ այդ դոկտորները սեղի է ունենում ուկրաինական մեծ բանաստեղծ, բաղամատանջ պոետ, ժողովրդական գուսան Տարաս Շեչենկոյի մահվան հիսնամյակի օրը»⁵։ Նշանակալից է և մարքսիստ-գրականագետ, ՌՄԴԲԿ-ի անդամ Հովակիմ Սուլովյանի «Տարաս Շեչենկո — ուկրաինյան Պրոմեթեոս» վերնագրով հոդվածը, որը տպագրվել է «Տարալ» պարբերականում⁶։ Հոդվածագիրը Շեչենկոյին ուկրաինական Պրոմեթեոս է համարում։ «Այդ անունը, — գրում է նա, — հայ ընթերցողի սրտին ոչինչ չի տալիս, սակայն նա այն մարդն է, որ համարվում է իր հայրենիքի փառքն ու պարծանքը, նրա մարգարեն, ուսուցիչը... նրա անունը ոչ միայն իր հայրենիքն է հիշում, այլև ամբողջ աշխարհը»։

Սուլովյանը հոգիածում հիշատակում է մի հետաքրքիր փաստ, որ առնչվում է Շեչենկոյի նկատմամբ հայերի ունեցած վերաբերմունքին։ Ուկրաինայի մեծ բանաստեղծը շփում է ունեցել հայերի հետ։ Վկայություններ կան, որ Շեչենկոն զեռես այն ժամանակ, երբ ուսանելիս է եղել Պետերբուրգի արվեստների ակադեմիայում, ունեցել է և իր հայ բարեկամները հանձինս Մովսես Մելիքովի և Հովհ. Այվազովսկու, որոնք նույնպես եղել են ակադեմիայի ուսանողներ։

Հայտնի է, որ Շեչենկոն ակադեմիա է ընդունվել 1838 թ., նույն այդ ժամանակներում՝ 1837—1838 թթ. ակադեմիա է ընդունվում աստրախանցի հայ Մովսես Եզոբի Մելիքովը⁷, որը ուսումնառության շրջանում և հետագայում բարեկամական կապերի մեջ է եղել Հովհ. Այվազովսկու հետ։ Եվ Շեչենկոն, ի Մելիքովը եղել են ուսանողության և արվեստասեր հասարակայնության այդ ժամանակվա կուռք, Ակադեմիայի պրոֆեսոր Կարլ Պավլովիչ Բրյուլովի աշակերտները, մտերմական և ընկերական կապեր են ունեցել միմյանց հետ։ Մովսես Մելիքովը իր հիշողություններում⁸ բնութագրելով Բրյուլովին, ի միջի միջոց ասում է, որ արվեստի և գրական աշխարհում եղած այն բոլոր նորը, որ պատվում էր արվեստի այդ լուսատուի՝ Բրյուլովի շուրջը, ձիրք, տաղանդ ունեցող մարդիկ, աջակցություն էին գտնում նրանից և շատ հաճախ առաջ էին լաշվում նրա կողմից։ «Այս մարդկանց թվին էր պատկանում, — առանձին դոկտորական կոնցերտ հիշատակում է Մելիքովը, — Տարաս Գրիգորևիչ Շեչենկոն, որն սկսեց զբաղվել նկարչությամբ և որին Բրյուլովը օգնեց զուրս պոկվելու ճորտատիրական դիճակից, տալով նրան ազատ արվեստագետի կոչում»⁹։

5 Մ. Սոլանդարյան, Երկեր, հ. 2-րդ, Երևան, 1959, էջ 202։

6 «Տարալ», Թիֆլիս, 1911, N 3, էջ 38—39։

7 Մովսես Մելիքովը եզրորոգին էր Բորոգինայի Հովհատամարտի շերտ, հետագայում գեներալ-մայոր Պաղոս Մովսեսի Մելիքովի և զանգում էր նրա խնամքի տակ։

8 М. Е. Меликов. Заметки и воспоминания художника-живописца, «Русская старина», СПб, 1896, № 6, էջ 643—674։

9 Նույն տեղում։

Մանգիշլակը թերակղզի է Կասպից ծովի հյուսիս-արևելյան ափում, որտեղ գտնվում էր Նովոպետրովսկ ամրությունը (ներկայումս կոչվում է Ֆորտ-Շևչենկո)։ Շևչենկոյի աքսորի վերջին կայանն է եղել այդ ամրոցը։ Այդ ժամանակ թերակղզում ապրելիս են եղել և հայեր։ Ամրությունը գտնվում է թերակղզու տափաստանի վրա ուղղաձիգ բարձրացող մի սեպ ժայռի կատարին, որի ստորոտում եղել է ռուս-հայկական մի բնակավայր։ Ահա այդ բնակավայրի հայերն են, որ այնքան ջերմ վերաբերմունք են ցույց տվել Շևչենկոյին։ Ինքը՝ Շևչենկոն էլ սիրով է վերաբերվել հայերին։ Ուշագրավ է ակունդատեսի պատմածը Շևչենկոյի մի հանդիպման մասին։ Բանաստեղծի հայրենակից սպա Նիկիտա Սավիչը 1852 թ. Նովոպետրովսկ է գալիս նրան տեսնելու։ Սավիչը իր հիշողություններում պատմում է, թե ինչպես ամրոցի պարետի մոտ տեղի ունեցած մի երեկույթում, որը տևել է մի ամբողջ երեկո, ինքը և Շևչենկոն նստած են եղել ամրոցում ապրող հայերի քրիստոնեական ծեսերը կատարելու եկած հայ քահանայի երկու կողմը։ «Տեր-հայրը,— ասում է նա,— զորմանալիորեն խելացի և կրթված մարդ էր, ոչ կաթոլիկ, այլ լուսավորչական, և կատարելապես տիրապետում էր ռուսերեն լեզվին։ Շևչենկոն ուղղակի կապով նրան։ Քահանան էլ իր կարգին շատ հետաքրքրվեց Տարաս Գրիգորեիչով...»¹⁰։ Ցավոք, Սավիչը չի գրում նրանց միջև տեղի ունեցած մեկ համար այնքան հետաքրքիր և արժեքավոր դրույցի մասին։ Կարելի է միայն ենթադրել, որ այդ դրույցը հավանաբար վերաբերել է հայ ժողովրդին, նրա անցյալին և ներկային։

Առհասարակ ենթադրվում է, որ Շևչենկոն շատ առիթներ պետք է ունենար հանդիպելու հայերի հետ։ Հայտնի է, որ նա երկար ճանապարհորդություններ է կատարել Ուկրաինայի քաղաքներում ու գյուղերում, այդ թվում և Կամենեց-Պոդոլսկ, որտեղ կար հայկական ստվար գաղութ։ Դժվար թե նա Ուկրաինայի հայկական գաղութներում, մասնավորապես Կամենեց-Պոդոլսկում հանդիպած շիներ հայերի և շփում չունենար նրանց հետ։ Ուստի և բացառված չէ այն հանգամանքը, որ Շևչենկոն թե՛ Պետերբուրգի իր հայ բարեկամներից, թե՛ Ուկրաինայում ապրող հայերից շատաքրքրվել հայ ժողովրդի այդ ժամանակվա վիճակով, նրա անցյալով, պատմությամբ, գրականությամբ, կուլտուրայով։

1914 թ. լրանում է Շևչենկոյի ծննդյան 100-ամյակը։ Այդ հոբելյանը նույնպես կատարվեց ցարական արգելքների և հետապնդումների պայմաններում։ Թիֆլիսի «Հորիզոն» թերթի աշխատակիցը գրում է, որ տոնակատարությունը անցկացնելու առթիվ Կիևում դեռևս մեկ ամիս առաջ կազմակերպվել էր հոբելյանական հանձնաժողով։ Նոր էր սկսել իր պատրաստությունները այդ հանձնաժողովը, երբ ցարական կառավարությունը արշավանք սկսեց ուկրաինացիների դեմ, վախենալով, որ հոբելյանի նշումը ազգային ցույցի դերածրի։ Կառավարության համապատասխան մարմինները, անգամ հոգևորականությունը շտապ միջոցներ ձեռք առան՝ արգելելու հոբելյանական հանդեսները։ Այդուամենայնիվ Կիևում, Մոսկվայում, Թիֆլիսում և այլ քաղաքներում կազմակերպվեցին հոբելյանական երեկոներ, որոնց հաջորդեցին ձերբակալություններ, և ապա ցույցեր ու գործադուլներ ցարական այդ արգելքների դեմ։ Ուշադրության արժանի է, որ ուսանողական ցույցերին մասնակցել են և հայերը։ Այդ ժամանակ Կիևում ուսանող Գ. Սելյանյանը պատմում է, թե

10 Չ. Սավիչան, Զինված մարզաբեմ, Երևան, 1964, էջ 171—172։

ինչպիսի մեծ դժուգություն առաջացրեց Շեչենկոյի հորեկյանի արգելումը Կիևի հասարակայնության մեջ: Կիևի ուսանողությունը արգելման կապակցությամբ ցույց կապակերպեց: Ցույցին մասնակցում էին նաև հայ և վրացի ուսանողները, որոնցից շատերը հետագայում կնդրկովկասում սովետական կարգեր հաստատվելուց հետո, դարձան կուսակցական ու պետական խոշոր գործիչներ¹¹:

Բերենր մի փաստ ևս, ցույց տալու համար, թե ինչպիսի վերաբերմունք ուներ հայ հեղափոխական երիտասարդությունը ազատության երգչի նկատմամբ: Պետերբուրգի նյարդա-հոգեբանական ինստիտուտի ուսանող, բուլշևիկ հրապարակախոս, 1905 թվականից կուսակցության անգամ Երվանդ Գարազաշ, Տարաս Շեչենկոյի ծննդյան հարյուրամյակի առթիվ մի հոդված է գրում և ուղարկում Թիֆլիս՝ «Մշակ» լրագրին: Ցարական կառավարության արգելքները և լրագրի լիբերալ ուղղությունը, ըստ երևույթին, պատճառ են դառնում հոդվածի չտպագրվելուն, որը հրապարակվեց միայն 47 տարի հետո՝ 1961 թ. «Գրական թերթ»-ում¹²:

Բնութագրելով Շեչենկոյի ստեղծագործությունը, Եր. Գարազաշը ասում է, որ նա արտասովոր կերպով երգել է ուկրաինացիների հասարակական ազատագրական դադափարները, նրա պոեզիան իր ճորտացած հայրենակիցների մտքերի ու տրամադրությունների հարազատ արտահայտությունն է, մարդկային իրավունքներից ու արժանապատվությունից զրկված իր ժողովրդի բողոքի խոսքը:

Ինչպես Շեչենկոյի մահվան հիսնամյակին, այնպես էլ այս հոբելյանին հայ առաջավոր մտավորականությունն իր համակրանքը ցուցաբերեց մեծ բանաստեղծի նկատմամբ, բարձր գնահատական տվեց նրա ստեղծագործություններին: Մտավորական Հ. Բաղդասարյանը Շեչենկոյի ծննդյան հարյուրամյակի առթիվ գրած իր հոդվածում ասում է. «Տարաս Գրիգորենիչ Շեչենկոն Ուկրաինայի մեծ բանաստեղծն է, ժողովրդական մի անմահ երգիչ, բողոք ու ազատություն քարոզող, ճնշվածներին ու հալածվածներին պաշտպան, եղբայրության ու հավասարության ջատագով: Բայց նա մեծ է ու արժեքավոր ոչ միայն ուկրաինացիների համար... Շեչենկոն մեծ է ու արժեքավոր և ամենքի, մահավանդ ճնշված փոքր ազգությունների համար»: Այնուհետև հոդվածագիրն ավելացնում է, որ Շեչենկոյի քնարի գլխավոր մոտիվը լինելով Ուկրաինայի անցյալ ու ներկա վիճակը, երգելով կադակների ազատ կյանքը, նրանց կոչվներ թուրքերի ու լեհերի դեմ, նրա հայրենասիրությունը նույնիսկ այս երևերում այլատյաց չէ: Սակայն, նշում է հոդվածագիրը, ինչպես իր պատմական պոեմներում, նույնպես և այն երկերում, ուր բանաստեղծը նկարագրում է իր ժողովրդի ներկա ստրկական վիճակը, նա միշտ հանդես է գալիս որպես անսխալ թշնամի ժողովրդական ամեն տեսակի բռնակալության, անազատություն, հարստահարության ու ճնշման¹³:

Բաղդասարյանի այս հոդվածը մի նոր ապացույց է անցյալի հայ առաջադեմ մտավորականության՝ Շեչենկոյի և նրա ստեղծագործությունների

11 Գ. Սեյրանյան, Տ. Գ. Շեչենկոյի ծննդյան 100-ամյակը և Կիևի ուսանողությունը, սովետական Վրաստան, Թբիլիսի, 1964, N 30, 10 մարտի:

12 «Գրական թերթ», Երևան, 1961, N 11, 10 մարտի:

13 Հ. Բաղդասարյան, Տարաս Շեչենկո: Ծննդյան հարյուրամյակի առթիվ, «Հորիզոն», Թբիլիսի, 1913, N 42, 26 փետրվարի:

Եկամտամբ ունեցած չերժ վերաբերմունքի Դրա պատճառը ուկրաինական բա-
նաստեղծի ստեղծագործությունների ազատասիրական ոգին է, նրանց մեծ
նշանակությունը ազատագրական շարժումների համար:

Այս կարգի հոգիածներ, թեև բիշ, բայց զրվել են և այլ պարբերական-
ներում: Հիշենք գրանցից մեկը, որն այս անգամ նպատակ ունի հայ գյուր-
ցականին ծանոթացնելու Շեչենկոյի և նրա ստեղծագործությունների հայրե-
նասիրական գաղափարների հետ: Մանկագիր Աթ. Խնկոյանը Թիֆլիսում հրա-
տարակվող մանկա-պատանեկան «Հասկեր» ամսագրում Շեչենկոյի ծննդյան
հարյուրամյակի կապակցությամբ տպագրել է մի հոդված «Անմոռանալի
Տարասը» վերնագրով¹⁴: Հեղինակը մանկավարժի հմտությամբ և իրեն հատուկ
մատչելի լեզվով շարադրել է Շեչենկոյի անցած կյանքի ուղին, որն ինչպես
և: է առում, եղել է շատ դժվարին ու շատ փշոտ: Խնկոյանը Շեչենկոյին ներ-
կայացնում է որպես հայրենասեր ու ազատասեր մի երգչի, որը վառ կերպով,
անկեղծ ու սրտալի երգել է իր թանկագին հայրենիքի բնությունը, նրա արձակ
գաշաէրը, պարզ ու վճիռ, անհուն-անհուն երկինքը, Ուկրաինայի փառավոր
անցյալն ու տխուր ներկան, թշվառ ճորտի վիճակը: Նրա երկերում, ասված է
հոգիածում, ինչպես կախարդական հայելու մեջ արտացոլվում է Ուկրաինան
իր անցյալով, ներկայով և դալիք օրերով: «Քանի կա Ուկրաինան, կան նաև
Շեչենկոյի տաք, սրտաբուխ և հոգեզմայլ երգերը»,— եզրակացնում է հոգիա-
ծագիրը, իսկ հետո շարունակում է. «Նա թաղված է իր հայրենի Ուկրաինա-
յում, Դնեպրի բարձր ափին, որտեղից երևում են լայնատարած ստեպը և բլրա-
շարքը: Նրա զերեզմանը ուխտատեղի է դարձել իր ուկրաինացիների համար,
որոնք այնպես են հարգում իրենց մեծագույն բանաստեղծին, ամենաանկեղծ
հայրենասերին՝ անմոռանալի Տարասին»:

Խնկոյանը հոգիածի հետ տպագրել է նաև Շեչենկոյից կատարած իր երեք
թարգմանությունները՝ երեխաներին նրա հիասքանչ ստեղծագործություններին
ծանոթացնելու համար: Դրանցից մեկը «Կտակն» է: Մեր գրականության մեջ
երկրորդ անգամն էր երևան գալիս այդ երկի թարգմանությունը: Սակայն, ինչ-
պես առաջին, այնպես և այս անգամ Շեչենկոյի այդ նշանավոր երկը չի տպա-
գրվում ամբողջական: Խնկոյանի թարգմանության մեջ հասկանալի պատճառ-
ներով բաց են թողնված բանաստեղծության 9—20 տողերը, որտեղ մասնա-
սորապես կոչ է արվում ժողովրդին՝ ոտքի ելնել, փշրել շղթաները և թշնամու-
արյունով ապատություն ձեռք բերել: Մյուս երկու թարգմանություններից մեկը
հատված է բանաստեղծի «Княжна» շափածո երկից, մյուսը նրա «Ой, дубово,
темный гаюх» բանաստեղծության թարգմանությունն է: Առաջինին Խնկոյանը
տվել է «Գյուղ», երկրորդին՝ «Պուրակ» վերնագրերը: Հոգիածի և թարգմանու-
թյունների հետ մեկտեղ ամսագրում պետեղված են նաև Շեչենկոյի դիմա-
նկարը, նրա գերեզմանի նկարը և մի բնդհանուր նկար՝ «Կորպարը (աշուղդ)
երգում է մալորոսների գյուղում» մականգրությամբ:

Մեր գրողներից շատերն են ոգևորվել Շեչենկոյի պոեզիայով և բարձր
են դնահատել նրա մատուցած ծառայությունները ուկրաինական և բոլոր ձրն-
շրված ժողովուրդների ազատագրության պայքարում: Դեռևս 60-ական թվա-
կանների սկզբներին Մ. Նալբանդյանը իր «Նրկրագործությունը որպես ուղիղ
նախապարհ» գրքում գրել է. «Փոքր-Ռուսիան... խնդրում է յուր անկախու-

¹⁴ «Հասկեր», Թիֆլիս, 1914, № 5, էջ 153—156:

թյունը, բայց Ռուսիո կառավարությունը շղթաներով կապում է նորան և ազատության մարդարեններին պատասխանում է բանտով, կնուտով և աքսորով»¹⁵։ Եվ ինչպես Աշ. Հովհաննիսյանն է գրում, այստեղ նախնական իրադրության ունի տնշուշտ Շեչենկոյին, որին նա նույնիսկ հանդիպած կարող է լինել 1859 թ. Պետերբուրգում¹⁶։

Շեչենկոյի պոեզիայի մոտիվները հարապատ են եղել Մ. Նախանգյանին, Ս. Շահապիյին, Հովհ. Հովհաննիսյանին, Հովհ. Թումանյանին, Ավ. Իսահակյանին և ուրիշներին։ Շեչենկոյի համար, մեր բանաստեղծները նույնպես երգել են հայրենիքի սերը, ժողովրդի ծանր վիճակը, նրա ազատագրումը։ Բողոքել են անարդարության, բռնության, անհավասարության, հին կարգերի ու բարքերի դեմ։ Առանձնապես Հովհ. Թումանյանը սիրել է Շեչենկոյի պոեզիայի խորը ժողովրդայնությունը, նրա խոհերն ու երգերը։ Ինչպես բանաստեղծի դուստր նվարդ Թումանյանն է վկայում, Թումանյանի գրասեղանի վրա մշտապես կարելի էր տեսնել «Կոբզարի» 1914 թ. հրատարակությունը ուսական է եվրոպական կլասիկների երկերի կողքին։ Թումանյանը հաճախ է երգել ուկրաինական ժողովրդական երգեր, դրանց թվում և Շեչենկոյի ժողովրդական աղանձներ ունեցող երգերը։ Նա համեմատելիս է եղել այդ երգերը հայ ժողովրդական երգերի հետ, որոնց մեջ գտել է ինչ-որ ընդհանրություն ու հարազատություն, այն է՝ թախիծ, տխրություն, մեղմություն։ Թումանյանի սիրած երգերից է եղել մասնավորապես Շեչենկոյի «Привычка»-ն։ Նա նույնիսկ թարգմանել էր այդ երգի առաջին երեք տները և ամեն անգամ երգելիս, ասում է նվարդ Թումանյանը, այդ տները մենք բոլորս երգում էինք հայերեն՝ նրա թարգմանությամբ¹⁷։

Խորն է եղել և Ավ. Իսահակյանի հետաքրքրությունը Շեչենկոյի և նրա ստեղծագործությունների նկատմամբ։ Նրա գրադարանում նույնպես եղել են աշխարհի շատ ժողովուրդների կլասիկ գրողների, այդ թվում և Շեչենկոյի երկերը, ինչպես նաև գրականություն նրա մասին։ Ուշադրության արժանի է, որ Իսահակյանը ունեցել է «Կոբզարի» 1900 թ. հրատարակությունը, որը նա ձեռք է բերել 1904 թ. մայիսին, Մոսկվայում։ «Կոբզար»-ի էջերի վրա Իսահակյանը նշումներ ունի կատարած, որոնք հետաքրքիր են ըստ ամենայնի և ջուշք են տալիս նրա համակրական, ջերմ վերաբերմունքը ուկրաինական մեծ բանաստեղծի նկատմամբ¹⁸։

Շեչենկոյի ամբողջական գնահատականը Իսահակյանը տվել է հետագայում, «Կոբզար»-ի հայերեն երկրորդ հրատարակության առթիվ գրած իր առաջաբանում, որտեղ մասնավորապես ասում է, թե Շեչենկոն եղել է Ուկրաինայի զինված մարզաբեմ, նա պայքարել է իր ժողովրդի երջանկության համար, լուսավորել է նրա ճանապարհը և առաջնորդել է նրան։ Նրա հրեղեն բանաստեղծությունները զինավառել են ժողովրդին ղեպի կռիվ, ղեպի ազատություն։

¹⁵ Մ. Նախանգյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3-րդ, Երևան, 1940, էջ 89։

¹⁶ Ա. Հովհաննիսյան, Նախնականներ և նրա ժամանակը, գիրք 2-րդ, Երևան, 1956, էջ 249։

¹⁷ Ն. Թումանյան, Ուկրաինական ժողովրդի հանճարեղ զավակը, «Գրական թերթ», Երևան, 1939, № 8, 5 մարտի։

¹⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Մ. Мкртчян, Аветик Исаакян и русская литература, Ереван, 1963, էջ 97։

А. С. БАБЛЯН

ШЕВЧЕНКО И АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННОСТЬ

Резюме

Творчество классика украинской литературы Т. Г. Шевченко проникнуто горячей любовью не только к своему родному, но и ко всем угнетенным народам. Свободолюбивые идеи и думы великого поэта и его праведный гнев против тиранов и угнетателей были близки и понятны многим. Шевченко вошел в армянскую литературу в конце 70-х годов прошлого века.

Армянам, жизнь которых была схожа с тяжелым положением украинцев.

Еще в 1861 г. в армянской периодической печати, издаваемой в Феодосии на русском языке («Радуга»), была напечатана статья о великом сыне украинского народа и опубликованы шесть его стихотворе-

В 1879 году, в издававшемся в Венеции журнале «Базмавеп», была опубликована статья К. Кушнеряна «Тарас Шевченко—национальный поэт Малороссии», в которой дается высокая оценка творчеству украинского национального поэта. Он называет Шевченко украинским Гомером. Кушнерян является первым переводчиком произведений Шевченко на армянский язык. В этой статье было помещено несколько стихотворений поэта.

Видные армянские публицисты и писатели в тяжелых условиях царского режима не упускали повода для популяризации жизни и творчества Тараса Шевченко. После первой русской революции в армянской периодической печати время от времени появляются переводы произведений Шевченко и статьи о нем, в которых подчеркивается значение его творчества для украинской и мировой литературы.

Особенно следует отметить отношение армянских марксистов-революционеров к Шевченко и его творчеству. В связи с 50-летием со дня смерти поэта публицист-большевик С. Спандарян обрушивается на правление народного дома в Тифлисе, который в юбилейный день «великого украинского поэта, поэта-горемыки, народного Кобзаря», превратил народную сцену в кафешантан. Другой марксист-литературовед О. Соловян считает Шевченко украинским Прометеем, его имя чтит не только родина, но и весь мир.

Армянская общественность широко отметила столетний юбилей поэта. Армянская революционная молодежь участвовала в демонстрациях против бесчинств царских властей в связи с проведением юбилея.

Мотивы поэзии Шевченко были близки армянским писателям — М. Налбандяну, С. Шахазизу, П. Иоаннисиану, Ов. Туманяну, Ав. Исаакяну и другим. Так же как и Шевченко, армянские поэты воспевали любовь к родине, тяжелое положение народа, его освобождение, протестовали против насилия, несправедливости, неравенства.